

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Լեռնապատ	Ավագանու հերթական նիստ	28.02.2020թ.	15:00	Լեռնապատ համայնքի ավագանու նիստերի սենյակում, գ. Լեռնապատ 27փ. 7/6

Համայնքի ղեկավար՝



Ս. Աբաղյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 28-ին՝ ժամը 15.00-ին Լեռնապատի համայնքապետարանի
նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 15.00

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

2. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ>>
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

3. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ
ՋԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՎԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

5. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

6. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

7. ԼԵՈՒՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-041-0022-0001
ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,1020 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԱՅԻԿ ՂԱՐԱՂԱՇՅԱՆ/

8. ԼԵՈՒՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-041-0022-0001
ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,12 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԱՅԻԿ ՂԱՐԱՂԱՇՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՄԱՐԿ ՎԱՐՂԱՆՅԱՆԸ

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ

Եկամուտներ

01.01.2019թ.- 31.12.2019թ.

Հազ. դրամ

Եկամուտի անունը	պլան	կատարում	%
Հողի հարկ	3836.5	3850.3	100.4
Գույքահարկ	4069.4	4354.8	107.0
Հողի վարձավճար	2014.6	2040.7	101.3
Տեղական տուրք	348.0	403.0	115.8
Տեղական վճարներ /աղբ. վճ./	2148.0 /1440.0/	2007.4 /1474.2/	93.5 /102.4/
Այլ վճարներ	600.0	724.0	120.7
Ընդամենը սեփական եկամուտներ	13016.5	13380.2	102.8
Դոտացիա	43968.9	43968.9	100.0
Սուբվենցիա	4602.9	4602.9	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	61588.3	61952.0	100.6

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2019թ-ի ԾԱԽՍԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ/

4111 աշխատավարձ

----- 27426727

4212 Էլ. Էներգիա

----- 1123208

4212	Գազ	-----	850494
4213	ջուր	-----	16921
4214	հեռախոս	-----	39200
4214	ինտերնետ	-----	108272
4215	ավտոմեք. և ապահովագրություն	-----	92000
4221	գործուղում	-----	10800
4234	ամսագրի և թերթերի բաժ .	-----	96400
4232	համակարգչ. ծառ. / Վեկտոր +, Ցենզոր, տեղեկ. համակ. զարգ. կեն. /	-----	198200
4237	ներկայացուցչ. ծախսեր / ծաղիկներ երկաշարժի զոհերի հիշատ. /	-----	55000
4241	գազի և հրշեջ. սպաս	-----	65764
4252	քարտրիչի լիցքավորում ,սարք. պահպանում ,ավտ. սպ	-----	33500
4261	գրասենյակային նյութեր /Վանատուր /	-----	248500
4264	ավտոպահեստամասեր /ծառ.մեք., բեռնատ.,ավտոբ./	-----	762800
4264	բենզին,գազ / ծառ. մեքեն. /	-----	366000
4269	շինանյութ /գ/պ ,վազոն տն./	-----	245100
4823	ավտոմեք. տեխզնում,	-----	64400
5121	ավտոբոսի գազի բալոններ	-----	380000
5122	համակարգիչ	-----	253000
5129	ավտոբոսի շարժիչի վերանորոգում	-----	468000

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԸ ԿԱԶՄՈՒՄ Է 32904286 ղրամ ,ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է 38746953 ղրամ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ոլորտում նախատեսված է եղել 12022900 ղրամ: Ճանապարհների վերանորոգման համար ծախսվել է 328000 ղրամի դիզ . վառելիք ` մի քանի անգամ վերանորոգվել է մայրուղուց մինչև գյուղամեջ ընկած ճանապարհը, իսկ սուբսիդ ծրագրով գնվել է տրակտոր` ընդ. գումարը 9280000 ղրամ, որից 4602900 ղրամը պետության սուբսիդավորումն է:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախատեսված 1440000 ղրամից ծախսվել է 530350 ղրամը, որից 297450 ղրամի բեռնատարի համար գազի լիցքավորում է կատարվել, իսկ մնացած 232900 ղրամով ավտոպահեստամասեր են գնվել:

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Փողոցային լուսավորության համար նախաստեղծված է եղել 1000000 ղրամ, ծախսվել է 995000 ղրամ , լուսավորության գիծը ավելացնելու համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Այս բնագավառում 2019թ-ի բյուջեով նախատեսված է եղել 200000 դրամ , բնակչությանը օգնելու նպատակով ամբուլատորիային տրվել է դրամաշնորհ 200000 դրամ :

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության / մանկապարտեզ / համար 2019թ-ի բյուջեով նախատեսված է եղել 8480000դրամ, որից դրամաշնորհ՝ մանկապարտեզի աշխատողների աշխատավարձերի և այլ ծախսերի համար տրվել է 8340000դրամ:Այս ոլորտում նախատեսված է եղել նաև 350000 դրամ՝ դպրոցի աշակերտներին օգնելու համար,կատարվել է՝ 200000դրամ փոխանցվել է դպրոցի աշակերտների գրքերի համար, առաջին դասարանցիների համար գրենական պիտույքների և այլ միջոցառումների համար տրվել է 30000դրամ, իսկ 100000դրամ՝ դպրոցի շրջանավարտների համար հուշանվերներ է գնվել:

ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ

Համայնքի բյուջեով այս ոլորտում նախատեսվել է 1310000 դրամ:Կազմակերպվել է շախմատի, նարդու և այլ ներհամայնքային մրցաշարեր, ինչպես նաև մշակույթային միջոցառումներ , որոնց ընթացքում պարզևատրվել են առաջնություն շահած մասնակիցներ՝ 180000դրամ , կազմակերպվել է ամանորին և երեխաների միջազգային օրվան նվիրված հանդեսներ՝ 90000դրամ և տրվել է ամանորյա տոպրակներ՝ 200000 դրամ: Կազմակերպվել են նաև միջոցառումներ նվիրված մայիսի 9-ին, կանանց միամսյակին,բերքի տոնին , Լեռնապատի օրվան , նշված միջոցառումները կազմակերպելու համար ծախսվել է 630000 դրամ: Տարբեր հիմնադրամների փոխանցվել է ընդամենը 50000դրամ նվիրատվություն: Այս բնագավառի ընդհանուր ծախսը կազմել է 1150000 դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս բնագավառում 2019թ-ի բյուջեում նախատեսվել է 3200000 դրամ և ծախսվել է 2910000դրամ հետևյալ խմբերով՝

Հարազատին կորցրած անձիք ՝ նախատեսված է - 1000000 դրամ, ծախսված է - 950000 դրամ

Ընտանիքի անդամներ և զավակներ՝ նախատեսված է - 200000 դրամ, ծախսված է - 200000 դրամ

Այլ նպաստներ բյուջերց՝ նախատեսված է - 2000000 դրամ, ծախսված է - 1760000 դրամ

Պահուստային ֆոնդում եղել է 4065400դրամ:

*****Ունեցել ենք հողի օտարումից ծախս -1204100դրամ:**

ԸՆդ. ծախսեր նախատեսվել է 70815253դրամ, ծախսվել է 55763536 դրամ:

Տարեկերջում մնացորդը կազմել է ընդամենը 15415379 դրամ, որը տարվել է 2020 թ-ի ֆոնդային բյուջե:

Համայնքի ղեկավար՝

Ս. Աբազյան

**ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ը/ կ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Նշումներ
1	3	4	5	8
1.	Ներքին ցանցի գազատարի կառուցում-մասնակի իրականացվել է գազաֆիկացում, մասնավորապես՝ գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում կառուցվել է ներքին ցանցի գազատար:	2019թ. մայիս	Համայնքի կողմից հատկացված խողովակներով և բնակիչների ներդրումներով	շարունակական
2.	Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում՝ որը ամբողջությամբ իրականացվել է պետական բյուջեով , ասֆալտապատվել է 4,2 կմ	2019թ մարտ-հոկտեմբեր	պետական ծրագիր պետական բյուջեից	ավարտված
3.	Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ ներհամայնքային ձեղեցների, ճանապարհների վերանորոգում սելավներից, ջրափոսերի ծածկում, ձյան մաքրման աշխատանքներ	տարվա ընթացքում և ձմռան ամիսներին	համայնքի բյուջեից 328,0 հազ դրամ դիվանագիտության գումար, <<Քարաբերդ>> ՍՊԸ-ի և բնակիչների միջոցով	ընթացիկ, շարունակական
4.	Վերանորոգվել է համայնքի արտագնա ճանապարհները	2019թ հուլիս-օգոստոս	Համայնքի ֆինանսական միջոցներով, բնակիչների մասնակցությամբ	շարունակական
5.	Աջակցություն դպրոցին՝ աշակերտների գրքերի համար, աջակցություն առաջին և ավարտական դասարաններին	2019թ, մայիս և 2019թ. սեպտեմբեր	Համայնքի ֆինանսական միջոցներով	շարունակական
6.	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարաշինություն	2017-2021	պետական բյուջե, պետական ծրագիր	Կառուցվել է 5 բնակարան,

				շարունակական
7.	համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզի, սպորտդահլիճի, խաղահրապարակի գործունեության հետ կապված ծախսեր	2019թ.	Համայնքի ֆինանսական միջոցներով	շարունակական
8.	Բուժ-Ամբուլատորիայի գործունեությանը աջակցություն՝ անվճար դեղորայքի տրամադրում բնակչությանը	2019թ. օգոստոս	համայնքի տարեկան բյուջեից 200,0հազ դրամ	ընթացքիկ , շարունակական
9.	Բնական աղետներից առաջացած վնասների վերականգնում	2017-2021թթ	համայնքի բյուջեից, յուրաքանչյուր տարի 400հազ դրամ	ընթացքիկ , շարունակական
10 .	Մեծահասակների հանգստի սենյակի վերանորոգում	2019թ հոկտեմբեր	համայնքի բյուջեի հաշվին	շարունակական
11	Աղբահանության կազմակերպում	2017թ-2021թ,	համայնքի բյուջեի հաշվին	Աղբատար մեքենայի շահագործման ապահովում Բնակիչներից աղբահանության վճարի գանձում
12.	հանդիսությունների սրահի, գույքի պահպանման և սրահի գործունեության իրականացման ծախսեր	2017թ. հոկտեմբեր-2021թ	համայնքի բյուջեի հաշվին	շարունակական
13.	Մշակույթի տուն ՀՈԱԿ-ի	2017-2021թթ.	գույքի կառավարմանը	չի կատարվել

	կազմավորում, մարզական կառույցների միավորում, շենքում բարվոք սենյակներ և մարզասենյակ՝ հնարավորություն ունենալ գրադարան, ակումբ, արվեստների և արհեստների դպրոց		պատկանող համայնքի դպրոցի հին շենքը չի տրամադրվել	
14.	համայնքի մի քանի փողոցներում՝ փողոցների լուսավորության ապահովում՝	2019թ. մայիսից - օգոստոս	համայնքի բյուջեից՝ 950000դրամ	տեղադրվել է լուսավորվածության 114 հենասյուն՝ 6 կմ փողոցներ ի լուսավորվածության ավելացում
15	Համայնքի կարիքների համար գյուղտեխնիկայի՝ տրակտոր և դիմացի շերեփ ձեռք բերում	2018-2019թթ	պետական բյուջեից սուբսիդավորում՝ 4602900 դրամ համայնքի բյուջեից՝ 4677500դրամ	Սուբսիդ ծրագրերի նոր հայտերի ներկայացում շարունակական

Համայնքի ղեկավար

Ս. Աբազյան

Լեռնապատ համայնքի 28 փետրվարի
2020թ.-ի ավագանու թիվ 2 նիստի
քննարկվելիք հարցերի վերաբերյալ
ընդունվելիք որոշումների

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱԶՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին
համապատասխան

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է,

Հաստատել 28 փետրվարի 2020 թվականի Լեռնապատ համայնքի ավագանու
թիվ 02 նիստի օրակարգը ըստ հավելվածի:

2. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ>> ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ
հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լեռնապատ համայնքի 2020 թվականի <<Տարեկան աշխատանքային
պլանը>> ըստ հավելվածի:

3. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի
7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, 8-րդ մասով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել 2019 թվականի Լեռնապատ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 2-ի:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06—ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան և ստացված դիմումները՝ սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ ըստ հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

5. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ/

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 24 մարտի 2011 թվականի <<<< Լոռու մարզի Լեռնապատ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 22 որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) ենթակետով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Լեռնապատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն նախադպրոցական ուսումնական հաստատությունը <<Մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն վերանվանելուն:

2. Հաստատել Լեռնապատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն <<Մանկապարտեզ>> -ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդ օրվանից:

6. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N61-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 2-6 հատվածների/հավելված/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

7. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,1020 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ՂԱՐԱՂԱՇՅԱՆ/

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականությունը հանդիսացող 06-041-0022-0001 ծածկագրից առանձնացված 0,1020հա բնակավայրերի այլ հողերից նպատակային նշանակությունը բնակավայրերի, բնակելի կառուցապատման փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

**8. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001
ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,12 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ՂԱՐԱՂԱՇՅԱՆ/

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականությունը հանդիսացող 06-041-0022-0001 ծածկագրից առանձնացված 0,12հա բնակավայրերի այլ հողերից նպատակային նշանակությունը բնակավայրերի, բնակելի կառուցապատման փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԻԲԵԿ ԱՔԱԶՅԱՆ

**ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**

